Վճարային հաշվեկշիռ

Հայաստանը արտահանում ու ներմուծում է բազմապիսի ապրանքներ ու ծառայություններ, Հայաստանից ժամանակավորապես կամ մշտապես Ռուսաստան, Եվրոպա, ԱՄՆ, այլ երկրներ մեկնած անձիք պարբերաբար Հայաստանում բնակվող իրենց հարազատներին փոխանցում են գումար, օտարերկրյա ընկերությունները Հայաստանում կատարում են ներդրումներ, Հայաստանի կառավարությունը, բանկերը, ձեռնարկությունները օտարերկրյա ֆինանսական հաստատություններից ներգրավում են միջոցներ: Այս բոլոր և բազմաթիվ այլ գործարքները, երբ Հայաստանը այլ երկրների հետ գործարքներ է կատարում, ամփոփ գրանցվում են Հայաստանի վճարային հաշվեկշռում:

Վճարային հաշվեկշիռը երկրի և մնացյալ աշխարհի միջև որոշ ժամանակաշրջանի ընթացքում կատարված տնտեսական գործարքների ամփոփ վիճակագրական ներկայացումն է: Գործարքները կարող են կապված լինել ապրանքների, գործոնային և ոչ–գործոնային ծառայությունների կամ ֆինանսական ակտիվների հետ:

Վճարային հաշվեկշռի հիմքում ընկած է ռեզիդենտության սկզբունքը: Երբ որևէ հայկական ընկերություն մեկ այլ հայկական ընկերության վաճառում է ապրանք, ապա դա վճարային հաշվեկշռում չպետք է գրանցվի, քանի որ գործարքը տեղի է ունեցել միևնույն երկրի ռեզիդենտների միջև: Սակայն, երբ այդ նույն հայկական ընկերությունը նույն ապրանքը վաճառում է ոչ–ռեզիդենտի, օրինակ՝ վրացական ընկերության, ապա դա պետք է գրանցվի և՛ Հայաստանի, և՛ Վրաստանի վճարային հաշվեկշիռներում:

Ռեզիդենտ: Վճարային հաշվեկշռի առումով տնտեսվարող սուբյեկտը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում գտնվում է իր տնտեսական շահերի կենտրոնը:

Մասնավորապես՝ ֆիզիկական անձիք համարվում են այն երկրի ռեզիդենտներ, որում սովորաբար բնակվում են: Երկրից ժամանակավորապես (նվազ քան մեկ տարով) բացակայողները շարունակում են համարվել ծագման երկրի ռեզիդենտ: Օրինակ՝ զբոսաշրջիկները, սեզոնային աշխատողները կամ հարևան երկրում աշխատողները համարվում են ծագման երկրի ռեզիդենտ. այսպես՝ բազմաթիվ ֆրանսիացիներ ամեն օր աշխատանքի են մեկնում Ժնև, իսկ երեկոյան վերադառնում են Ֆրանսիա:

Իսկ այն անձիք, ովքեր արտասահմանում են գտնվում ավելի քան մեկ տարի, դադարում են համարվել ծագման երկրի ռեզիդենտներ և դառնում են հյուրընկալ երկրի ռեզիդենտներ: Սակայն, արտասահման ուսման կամ բուժման մեկնած անձիք, անկախ ուսման կամ բուժման տևողությունից, շարունակում են մնալ ծագման երկրի ռեզիդենտներ: Համանմանորեն՝ դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատողները ու զիված ուժերի

ներկայացուցիչները՝ անկախ այլ երկրում գտնվելու տևողությունից, համարվում են ծագման երկրի ռեզիդենտներ:

Իսկ իրավաբանական անձը համարվում է այն երկրի ռեզիդենտ, որում իրականացնում է ապրանքների կամ ծառայությունների արտադրություն և կամ տնօրինում է հող կամ շինություններ: Բազմազգային ընկերությունների մասնաճյուղերը համարվում են հյուրընկալ երկրների ռեզիդենտներ:

Կրկնակի գրառում: Յուրաքնաչյուր տնտեսական գործարք, սովորաբար, ներառում է երկու կողմ: Օրինակ՝ արտահանում գործարքը ներառում է մի կողմից ապրանքների արտահանումը, մյուս կողմից՝ դրա դիմաց վճարումը: Այդ իսկ պատճառով վճարային հաշվեկշիռը կազմվում է կրկնակի գրառման վիճակագրական սկզբունքով, ըստ որի յուրաքանչյուր գործարք գրանցվում է երկու, իրար հավասար, բայց հակառակ նշան ունեցող գրառումներով: Ընդ որում՝ արտասահմանից գումարի ստացումը գրանցվում է կրեդիտում՝ դրական նշանով, իսկ ռեզիդենտի կողմից արտասահման գումարի վճարումը՝ դեբետում, բացասական նշանով: Այսինքն՝ գործարքը գրանցվում է կրեդիտում (ա) ապրանքների ու ծառայությունների արտահանման, (բ) օտարերկրյա ֆինանսական ակտիվների կրճատման ու օտարերկրյա ֆինանսական պարտավորությունների մեծացման դեպքում: Հակադարձաբար՝ գործարքը գրանցվում է դեբետում (ա) ապրանքների ու ծառայությունների ներմուծման, (բ) օտարերկրյա ֆինանսական ակտիվների մեծացման ու օտարերկրյա ֆինանսական պարտավորությունների կրճատման դեպքում: Այլ կերպ՝ ակտիվների դեպքում՝ և՛ իրական, և՛ ֆինանսական, դրական մեծությունը (կրեդիտ) նշանակում է պաշարի կրճատում, իսկ բացասական մեծությունը (դեբետ) նշանակում է պաշարի ավելացում: Իսկ պարտավորությունների դեպքում դրական նշանը ցույց է տալիս պաշարի ավելացում, իսկ բացասական նշանը՝ պաշարի նվազում:

Աղյուսակ 11. Գործարքների գրանցումը վճարային հաշվեկշռում		
Ապրանքների ու ծառայությունների արտահանում	կրեդիտ	+
Ապրանքների ու ծառայությունների ներմուծում	դեբետ	–
Ստացված եկամուտներ	կրեդիտ	+
Վճարված եկամուտներ	դեբետ	–
Ստացված տրանսֆերտներ	կրեդիտ	+
Փոխանցված տրանսֆերտներ	դեբետ	–
Ֆինանսական պարտավորությունների ավելացում	կրեդիտ	+
Ֆինանսական պարտավորությունների կրճատում	դեբետ	–
Ֆինանսական ակտիվների կրճատում	կրեդիտ	+
Ֆինանսական ակտիվների ավելացում	դեբետ	–

Այսպիսով՝ յուրաքանչյուր միջազգային գործարք, որը գրանցվում է դեբետում, ունի իրեն հակակշռող կրեդիտային գրանցումը և հակառակը: Կրկնակի գրառման արդյունքում բոլոր դեբետային գրառումների գումարը բացարձակ արժեքով հավասար է բոլոր կրեդիտային

գրառումների գումարին, իսկ դրանց հանրագումարը հավասար է զրոյի: Այդ տեսանկյունից վճարային հաշվեկշիռը միշտ հավասարակշռված է:

Օրինակ՝ «Նաիրիտ» ընկերության կողմից 500,000 դոլար արժողության կաուչուկի արտահանումը Հնդկաստան երկու երկրների վճարային հաշվեկշիռներում, երբ հնդկական ընկերությունը վճարում է հնդկական բանկում իր հաշվից հայկական բանկում «Նաիրիտի» հաշվին փոխանցելու միջոցով, արտացոլվում է հետևյալ կերպ.

Աղյուսակ 12. Հայաստանի և Հնդկաստանի վճարային հաշվեկշիռներում փոփոխությունները, երբ Հայաստանից արտահանվում է ապրանք Հնդկաստան

(դոլար)

Հայաստան		Վրաստան	
Արտահանում. կրեդիտ	+ 500,000	Ներմուծում. դեբետ	– 500,000
Ֆինանսական ակտիվների ավելացում. դեբետ	– 500,000	Ֆինանսական ակտիվների կրճատում. կրեդիտ	+ 500,000

Տրանսֆերտներ: Վճարային հաշվեկշռում գրանցվող գործարքների մեծ մասի դեպքում տնտեսական արժեքները տրամադրվում են կամ ստացվում են այլ տնտեսական արժեքների դիմաց: Օրինակ՝ երբ ապրանք է արտահանվում կամ ներմուծվում, ապա դրա դիմաց համարժեք մեծությամբ վճարվում է: Սակայն, որոշ դեպքերում տնտեսական արժեքները տրամադրվում են առանց փոխհատուցման. այդպիսիք կոչվում են տրանսֆերտներ և ներառում են մարդասիրական օգնությունը, սփյուռքից ցուցաբերվող աջակցությունը, ոչ–ռեզիդենտ արտագնա աշխատողների փոխանցումները, միջազգային կազմակերպություններում անդամակցության վճարները և այլն: Նման դեպքերի համար վճարային հաշվեկշռում նախատեսված է առանձին հոդված՝ տրանսֆերտներ անվամբ, կրկնակի գրառման սկզբունքը չխախտելու համար:

Օրինակ, երբ Հայաստանի կառավարությունը Կատրինայի ջրհեղեղից հետո ԱՄՆ–ին ցուցաբերեց 250,000 դոլար արժողության առաջին անհրաժեշտության ապրանքների աջակցություն, ապա դա ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվեց իբրև առաջին անհրաժեշտության ապրանքների արտահանում (կրեդիտ), որի դիմաց «վճարվել է» տրանսֆերտով (դեբետ): Նկատենք, որ տրանսֆերտներ հոդվածում գործարքը գրանցվում է իբրև դեբետ կամ կրեդիտ՝ կախված նրանից, թե զուգահեռ գործարքը կրեդիտ է, թե՝ դեբետ: Օրինակ, երբ ԱՄՆ–ի կառավարությունը Հայաստանին նվիրում է, օրինակ՝ 2մլն. դոլարի ռազմական հանդերձանք, ապա դա ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվում է իբրև ապրանքների ներմուծում (դեբետ), որի դիմաց «վճարվել է» տրանսֆերտով (կրեդիտ): Իսկ քանի որ, սովորաբար, օգնություն Հայաստանին է ցուցաբերվում և ոչ թե Հայաստանն է օգնություն ցուցաբերում, ապա ՀՀ վճարային հաշվեկշռում տրանսֆերտներ հոդվածի գերակշռող մասը կրեդիտ է, ոչ թե՝ դեբետ: Օրինակ՝ 2006թ–ին արտասահմանից Հայաստանին տրված տրանսֆերտները (կրեդիտ) կազմել են 663մլն. դոլար, իսկ

Հայաստանից արտասահման փոխանցված տրանսֆերտները(դեբետ) կազմել են 83մլն. դոլար:

Աղյուսակ 13. Հայաստանի և ԱՄՆ–ի վճարային հաշվեկշիռներում փոփոխությունները, երբ Հայաստանը մարդասիրական օգնություն է ցուցաբերում ԱՄՆ–ին

(դոլար)

Հայաստան		ԱՄՆ	
Արտահանում. կրեդիտ	+ 250,000	Ներմուծում. դեբետ	– 250,000
Տրանսֆերտներ. դեբետ	– 250,000	Տրանսֆերտներ. կրեդիտ	+ 250,000

Սխալներ և բացթողումներ: Տեսականում վճարարային հաշվեկշիռը պետք է լինի հավասարակշռված, սակայն, դեբետների ու կրեդիտների գումարը գործնականում զրոյի հավասար չի լինում: Նման անհամապատասխանությունը ունի տարբեր պատճառներ, որոնց թվում այն, որ գործարքների վերաբերյալ տվյալները հավաքվում են տարբեր աղբյուրներից (մաքսային մարմիններ, բանկեր, վիճակագրական հետազոտություններ և այլն), բացի այդ հարկային ու մաքսային պարտավորություններից խուսափելու համար գործարքները թաքցվում կամ թերհայտարարագրվում են, կամ ապրանքների առաքման ու դրանց դիմաց վճարման միջև լինում է ժամանակային ճեղքվածք և այլն: Օրինակ՝ երբ կազմակերպությունը ապրանքի ներմուծման նպատակով բանկային համակարգի միջոցով օտարերկրյա արտադրողին է փոխանցում է 1մլն. դոլար, սակայն ապրանքները ներմուծում է մաքսանենգ ճանապարհով, ապա բանկերի ու մաքսային մարմինների տվյալների միջև առաջանում է անհամապատասխանություն: Կամ, եթե մեկ այլ կազմակերպություն ապրանքները ներմուծում է այս տարի, սակայն դրա դիմաց վճարում է հաջորդ տարի, ապա ամեն տարվա համար ստացվում է անհամապատասխանություն, քանի որ վճարային հաշվեկշիռը կազմվում է յուրաքանչյուր տարվա համար առանձին:

Նման անհամապատասխանությունները գրանցվում են «զուտ սխալներ և բացթողումներ» հոդվածում: Նշենք, որ սխալներն ու բացթողումները կարող են հակակշռել միմյանց, և այս հոդվածի մեծությունը չի կարող համարվել վճարային հաշվեկշռի կազմման ճշտության չափանիշ:

Հոսք և պաշար: Վճարային հաշվեկշիռը կազմված է տնտեսական հոսքերից: Իսկ «երկրի միջազգային ներդրումային դիրքը» հաշվարկվում է իբրև պաշար: Վերջինս արտահայտում է մնացյալ աշխարհին ներկայացվող կուտակային պահանջները և մնացյալ աշխարհի նկատմամբ ստանձնած կուտակային պարտավորությունները: Միջազգային ներդրումային դիրքը հաշվարկվում է ժամանակի որոշակի պահի համար (օրինակ՝ տարվա վերջի դրությամբ), իսկ վճարային հաշվեկշիռը՝ որոշակի ժամանակաշրջանի համար (օրինակ՝ մեկ տարվա համար): Օրինակ՝ «ուղղակի ներդրումներ արտասահմանից» հոդվածը վճարային հաշվեկշռում ցույց է տալիս տվյալ տարվա ընթացքում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումները, սակայն, միևնույն հոդվածը միջազգային ներդրումային դիրքում ցույց է

տալիս տվյալ պահի դրությամբ երկրում կատարված օտարերկրյա ուղղակի ներդրումները (ՕՈՒՆ) ամբողջությամբ: Այսպես՝ ըստ ՀՀ վճարային հաշվեկշռի վիճակագրության, 2006թ–ին ՕՈՒՆ Հայաստանում կազմել է 291մլն. դոլար, իսկ ըստ ՀՀ միջազգային ներդրումային դիրքի վիճակագրության 2006թ–ի դեկտեմբերի 31–ի դրությամբ ՕՈՒՆ–ի կուտակային պաշարը Հայաստանում կազմում էր 1,481մլն. դոլար: Պաշարի օրինակ են նաև երկրի պաշտոնական պահուստները և արտաքին պարտքը:

Աղյուսակ 14. ՀՀ վճարային հաշվեկշիռը 2006թ–ին

(մլն. դոլար)

Ընթացիկ հաշիվ			Կապիտալի և ֆինանսական հաշիվ		
1	Ապրանքների և ծառայությունների արտահանում	+ 1408	14	Կապիտալի հաշիվ, զուտ	+ 70
2	Ապրանքներ	+ 1038	15	Ֆինանսական հաշիվ, զուտ (առանց պաշտոնական պահուստների, տողեր 16, 19, 22)	+ 527
3	Ծառայություններ	+ 370	16	Ուղղակի ներդրումներ	+ 287.5
4	Ապրանքների և ծառայությունների ներմուծում	– 2328	17	Արտասահմանում	– 3.5
5	Ապրանքներ	– 1904	18	Հայաստանում	+ 291
6	Ծառայություններ	– 424	19	Պորտֆելային ներդրումներ	+ 9.5
7	Զուտ եկամուտներ	+ 99	20	Ակտիվներ	– 0.5
8	Ստացված եկամուտներ	+ 481	21	Պարտավորություններ	+ 10
9	Վճարված եկամուտներ	– 382	22	Այլ ներդրումներ	+ 230
10	Զուտ ընթացիկ տրանսֆերտներ	+ 580	23	Ակտիվներ	+ 50
11	Ապրանքների հաշվեկշիռ (տողեր 2 և 5)	– 866	24	Պարտավորություններ	+ 180
12	Ապրանքների և ծառայությունների հաշվեկշիռ (տողեր 1 և 4)	– 920	25	Զուտ սխալներ և բացթողումներ**	+ 3
13	Ընթացիկ հաշվեկշիռ (տողեր 1, 4, 7 և 10)	– 241*	26	Պահուստային ակտիվներ	– 359
			27	Վճարային հաշվեկշիռ, ընդամենը	0

* Տասնորդական նիշերի կլորացման հետևանքով աղյուսակում հաշվարկված հանրագումարային ցուցանիշները մասամբ տարբերվում են պաշտոնական տվյալներից:
** Հաշվարկվում է մնացորդային սկզբունքով

Վճարային հաշվեկշռի հաշիվների դասակարգումը

Ընթացիկ հաշիվ

Ապրանքներ

Ապրանքներ հոդվածում գրանցվում են ապրանքների արտահանումը և ներմուծումը: Ընդ որում արտահանումը գրանցվում է կրեդիտում, ներմուծումը՝ դեբետում: Ե՛վ արտահանումը, և՛ ներմուծումը գրանցվում են արտահանող երկրի մաքսային սահմանը հատելու պահին ունեցած արժեքով: Օրինակ, Հարավային Կորեայից Հայաստան ներմուծվող ավտոմեքենաները մեր վճարային հաշվեկշռի ապրանքներ հոդվածում գրանցվում են Հարավային Կորեայի մաքսային սահմանին ունեցած արժեքով, այսինքն՝ առանց Կորեայից Հայաստան փոխադրելու տրանսպորտային և ապահովագրական ծախսերի:

Ապրանքներ հոդվածում են ներառվում նաև (ա) *վերամշակման նպատակով ապրանքների արտահանումը կամ ներմուծումը*, երբ դրանք վերամշակումից հետո վերաներմուծվում են կամ վերաարտահանվում են (օրինակ՝ արտահանվում է հում նավթ, ներմուծվում է բենզին), (բ) *շարժական ապրանքների վերանորոգումը,* երբ ռեզիդենտի կողմից ոչ–ռեզիդենտի համար (կամ հակառակը) կատարվում է նավի, օդանավի կամ այլ տրանսպորտային միջոցի վերանորոգում, (գ) *տրանսպորտային կայաններում ձեռք բերված ապրանքները,* երբ ռեզիդենտ փոխադրողը արտասահմանում կամ ոչ–ռեզիդենտ փոխադրողը տվյալ երկրում ձեռք է բերում վառելիք, սննդամթերք, պահեստամասեր, և (դ) *ոչ մոնետար ոսկին,* որը ներառում է ոսկու, բացառությամբ կենտրոնական բանկի պահուստներում օգտագործվելու նպատակով (մոնետար ոսկի), արտահանումը և ներմուծումը:

Ծառայություններ

Ծառայություններ հոդվածում ներառվում են տրանսպորտի, զբոսաշրջության, կապի, ապահովագրության և այլ ծառայությունների հետ կապված գործարքները:

Տրանսպորտ: Տրանսպորտ հոդվածը ներառում է բոլոր տիպի (ցամաքային, ծովային, օդային, խողովակաշարային) տրանսպորտային միջոցներով մի երկրի ռեզիդենտի կողմից մեկ այլ երկրի ռեզիդենտին մատուցվող ծառայությունները, երբ տեղի է ունենում ուղևորների կամ բեռների փոխադրում, կամ տրանսպորտային միջոցների վարձակալում անձնակազմով:

Ուղևորների փոխադրման դեպքում գործարքը գրանցվում է կրեդիտում, եթե ռեզիդենտ փոխադրողը տրանսպորտային ծառայություն է մատուցում ոչ–ռեզիդենտին, և գրանցվում է դեբետում, եթե ոչ–ռեզիդենտ փոխադրողը տրանսպորտային ծառայություն է մատուցում ռեզիդենտին: Օրինակ, երբ Արմավիան փոխադրում է Վրաստանի ռեզիդենտներին, ապա դա տրանսպորտային ծառայությունների արտահանում է (կրեդիտ), իսկ երբ Ավստրիական ավիաուղիները փոխադրում է Հայաստանի ռեզիդենտներին, ապա դա տրանսպորտային ծառայությունների ներմուծում է:

Բեռների փոխադրման դեպքում ընդունվում է, որ տրանսպորտային տեղափոխման ծախսերը կատարում է ներմուծող երկիրը։ Հետևաբարա, եթե բեռները ներմուծվող ապրանքներ են, ապա գործարքը գրանցվում է դեբիտում, երբ փոխադրումը իրականացնում է ոչ–ռեզիդենտ փոխադրողը։ Նկատենք՝ երբ ներմուծվող ապրանքի փոխադրումը իրականացնում է ռեզիդենտ փոխադրողը, ապա դա վճարային հաշվեկշռում ընդհանրապես չպետք է գրանցվի, քանի որ այդ գործարքը տեղի է ունենում ռեզիդենտ ներմուծողի և ռեզիդենտ փոխադրողի միջև։ Իսկ եթե բեռները արտահանվող ապրանքներ են, ապա գործարքը գրանցվում է կրեդիտում, երբ փոխադրումը իրականացնում է ռեզիդենտ փոխադրողը։ Դարձյալ, երբ արտահանվող ապրանքների փոխադրումը իրականացնում է ոչ–ռեզիդենտ փոխադրողը, ապա դա որևէ երկրի վճարային հաշվեկշռում չպետք է գրանցվի, քանի որ գործարքը տեղի է ունենում ոչ–ռեզիդենտ փոխադրողի և ոչ–ռեզիդենտ ներմուծողի միջև։ Կրեդիտում է գրանցվում նաև ռեզիդենտ փոխադրողի կողմից երկու այլ երկրների միջև բեռների փոխադրումը։

Տրանսպորտ հոդվածում է ներառվում նաև տրանսպորտային միջոցի (նավ, օդանավ, բեռնատար) վարձակալումը անձնակազմով՝ սահմանափակ ժամանակով (օրինակ՝ մեկանգամյա փոխադրման համար), բեռների կամ ուղևորների փոխադրման նպատակով։

Ճանապարհորդություն։ Ճանապարհորդություն հոդվածը ներառում է այն բոլոր ապրանքներն ու ծառայությունները, որոնք ձեռք են բերվել ճանապարհորդի կողմից նվազ քան մեկ տարի տևողությամբ, անձնական կամ գործարար նպատակով ճանապարհորդության ընթացքում, բացառությամբ միջազգային տրանսպորտային տեղափոխման ծառայության, որը ներառվում է տրանսպորտ հոդվածում։ Այսպես, երբ հայ զբոսաշրջիկը մեկնում է Փարիզ, ապա նրա կողմից ձեռք բերված բոլոր ապրանքներն ու ծառայությունները, այդ թվում սննդի, հյուրանոցի, հուշանվերների, տրանսպորտի ծախսերը, բացառությամբ Երևան–Փարիզ չվերթի արժեքի, համարվում են ճանապարհորդության ծառայությունների ներմուծումը։ Եվ հակառակը, երբ ֆրանսիացի զբոսաշրջիկը այցելում է Երևան, ապա նրա կողմից ձեռք բերված ապրանքներն ու ծառայությունները համարվում են ճանապարհորդության ծառայությունների արտահանում։ Ահա թե ինչու ճանապարհորդություն ծառայությունը յուրահատուկ է Ծառայություններ հոդվածում, քանի որ հանդիսանում է ոչ թե որոշակի տիպի ծառայություն, այլ ճանապարհորդի կողմից սպառված ծառայությունների ու ապրանքների հանրագումար։

Հիշենք, որ ուսման և բուժման նպատակով ճանապարհորդները շարունակում են մնալ ծագման երկրի ռեզիդենտ, նույնիսկ, մեկ տարի անց։ Հետևաբար, նրանց կողմից կատարված բոլոր ծախսերը (ուսման վարձ, բուժման վճար, սնունդ և այլն) գրանցվում են Ճանապարհորդություն հոդվածում։

Կապի ծառայություններ։ Ներառում են ռեզիդենտների և ոչ–ռեզիդենտների միջև (ա) հեռահաղորդակցության և (բ) փոստային ծառայությունները։

Շինարարական ծառայություններ: Ներառում են արտասահմանում ռեզիդենտ ձեռնարկության (կրեդիտ) և տվյալ երկրում ոչ–ռեզիդենտ ձեռնարկության (դեբետ) կողմից շինարարության կամ մոնտաժման ծառայությունների մատուցումը:

Ապահովագրական ծառայություններ: Ռեզիդենտ ապահովագրական ընկերության կողմից ոչ–ռեզիդենտին (կրեդիտ) և ոչ–ռեզիդենտ ապահովագրական ընկերության կողմից ռեզիդենտին (դեբետ) ապահովագրական ծառայությունների մատուցում, ինչպես օրինակ՝ ներմուծվող կամ արտահանվող բեռների, կյանքի, առողջության կամ այլ բնույթի ապահովագրություն: Նկատենք՝ երբ ռեզիդենտ ապահովագրական ընկերությունը ապահովագրում է ներմուծվող բեռները, ապա դա վճարային հաշվեկշռում չի գրանցվում:

Ֆինանսական ծառայություններ: Ներառում է ռեզիդենտի և ոչ–ռեզիդենտի միջև ֆինանսական միջնորդության և հարակից ծառայությունները: Այդպիսիք են ակրեդիտիվի, ֆինանսական լիզինգի, վարկային գծի, բանկային ակցեպտի, արտարժույթի փոխանակման ծառայությունների վճարները, ինչպես նաև բրոկերային ծառայությունների և ֆինանսական ածանցյալների հետ կապված գործարքների կոմիսիոն վճարները:

Համակարգչային և տեղեկատվական ծառայություններ: Ներառում է համակարգչային տվյալների ու լրատվության հետ կապված ծառայությունները ռեզիդենտների ու ոչ–ռեզիդենտների միջև: Ինչպես, օրինակ, տվյալների բազաների մշակման և պահպանման, տվյալների վերլուծման, ծրագրային ապահովման մշակման, համակարգիչների և օժանդակ սարքավորումների պահպանման և վերանորոգման ծառայությունները և լրատվական գործակալությունների ծառայություններն ու թերթերի ու պարբերականների ուղղակի բաժանորդագրությունը:

Արտոնագրային վճարներ և հեղինակային հոնորարներ: Ներառում են ռեզիդենտների և ոչ–ռեզիդենտների միջև (ա) ոչ շոշափելի, չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների և սեփականության իրավունքների արտոնագրված օգտագործման (ինչպես արտոնագրերի, հեղինակային իրավունքների, ապրանքային անվանումների, արդյունաբերական պրոցեսների, ֆրենչայզների և այլն) ու (բ) արտադրված բնօրինակների կամ կրկնօրինակների (ինչպես ֆիլմերի) լիցենզավորման պայմանագրով օգտագործման վճարները:

Այլ գործարար ծառայություններ: Ներառում են ռեզիդենտի կողմից ոչ–ռեզիդենտին (և հակառակը) (ա) գործառնական լիզինգի, (բ) առևտրամիջնորդության, (գ) իրավաբանական, հաշվապահական, աուդիտորական, կառավարման խորհրդատվության, հասարակության հետ կապերի, (դ) գովազդի, շուկայի ուսումնասիրման, հասարակական կարծիքի ուսումնասիրման, (ե) հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների, (զ) ճարտարապետական, ինժեներական, (է) գյուղատնտեսական, հանքարդյունաբերական և այլ ծառայությունների մատուցումը:

Անձնական, մշակութային և հանգստի ծառայություններ: Ներառում են ռեզիդենտի կողմից ոչ–ռեզիդենտին (և հակառակը) (ա) տեսաձայնային ծառայությունների (ֆիլմերի, ռադիո և հեռուստատեսային հաղորդումների, ձայնագրությունների արտադրության հետ կապված ծառայություններ և առնչվող վճարներ, օրինակ՝ դերասանների, ռեժիսորների, արտադրողների կողմից ստացված վճարներ արտասահմանում նկարահանումների համար, ֆիլմերի ցուցադրության իրավունքի վաճառքից ստացված վճարներ) և (բ) թանգարանների, գրադարանների, արխիվների և այլ մշակութային, սպորտային և հանգստի ծառայությունների մատուցումը:

Կառավարական ծառայություններ: Ներառում են դեսպանությունների, հյուպատոսությունների, ռազմական միավորների գործարքները ոչ–ռեզիդենտների հետ: Օրինակ՝ Երևանում ԱՄՆ–ի դեսպանատունը գանձում է 100 դոլար՝ մուտքի արտոնագիր ստանալու յուրաքանչյուր հարցազրույցի համար, ինչը ՀՀ վճարային հաշվեկշռում գրանցվում է իբրև կառավարական ծառայությունների ներմուծում (դեբետ):

Եկամուտներ

Եկամուտներ հոդվածը կազմված է երկու բնույթի գործարքներից՝ *աշխատողների վարձատրություն* և *եկամուտներ ներդրումներից*:

Աշխատողների վարձատրությունը ներառում է ռեզիդենտների կողմից ոչ–ռեզիդենտ աշխատողներին (և հակառակը) վճարված աշխատավարձը ու դրան հավասարեցված վճարները՝ կանխիկ կամ բնեղեն: Օրինակ՝ Հայաստանից Ռուսաստան սեզոնային աշխատանքի մեկնած արտագնա աշխատողի աշխատավարձը գրանցվում է ՀՀ վճարային հաշվեկշռի «աշխատողների վարձատրություն» ենթահոդվածի կրեդիտում: Կրեդիտում է գրանցվում նաև Երևանում ԱՄՆ–ի դեսպանատանը աշխատող անվտանգության տեղական աշխատակցի աշխատավարձը, քանի որ դեսպանատունը համարվում է ոչ–ռեզիդենտ: Իսկ Ռուսաստանից Հայաստան սեզոնային աշխատանքի եկած շինարարների (որոնք աշխատում են Մարզահամերգային համալիրում) աշխատավարձը գրանցվում է ՀՀ վճարային հաշվեկշռի «աշխատողների վարձատրություն» ենթահոդվածի դեբետում:

Ներդրումներից եկամուտները ներառում են ռեզիդենտի կողմից արտաքին ֆինանսական ակտիվների տնօրինման դիմաց ստացված եկամուտները (կրեդիտ) և ոչ–ռեզիդենտի նկատմամբ արտաքին պարտավորությունների դիմաց վճարված եկամուտները (դեբետ): Ներդրումներից եկամուտների գերակշիռ մասը կազմում են կապիտալի մասնակցությունից եկամուտները (շահաբաժիններ) և պարտքի հանձնառության եկամուտները (տոկոսավճարներ): Ներդրումներից եկամուտները դասակարգվում են (ա) *ուղղակի ներդրումներից եկամուտների*, (բ) *պորտֆելային ներդրումներից եկամուտների* և (գ) *այլ ներդրումներից եկամուտների*:

Ուղղակի ներդրումը միջազգային ներդրումների տարբերակ է, որի դեպքում մեկ տնտեսության ռեզիդենտ միավորը ձեռք է բերում երկարաժամկետ շահ մեկ այլ տնտեսության

ռեզիդենտ ձեռնարկությունում: Երկարաժամկետ շահը ենթադրում է ուղղակի ներդրողի ու ուղղակի ներդրման ձեռնարկության միջև երկարատև հարաբերությունների առկայություն և ներդրողի կողմից ձեռնարկության կառավարման վրա նշանակալի ազդեցություն: Ուղղակի ներդրումը ներառում է ոչ միայն այդ հարաբերությունները հաստատող նախնական գործարքը, այլև նրանց միջև բոլոր հետագա գործարքները:

Ի տարբերություն ուղղակի ներդրումների՝ պորտֆելային նեդրումների դեպքում ներդրողը չի տիրապետում ձեռնարկության կառավարման վրա ներգործելու բավարար ազդեցության և հետաքրքրված է իր կապիտալի ապահովվածությամբ, դրա արժեքի մեծացմամբ և հատույցի ստացմամբ:

Սակայն, քանի որ հնարավոր չէ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պարզել՝ արդյո՞ք ներդրողը հետապնդում է երկարաժամկետ շահ, թե՝ ոչ, ապա որպես երկարաժամկետ շահի ֆորմալ չափանիշ վճարային հաշվեկշռում կիրառվում է ձեռնարկության առնվազն 10% բաժնեթղթերը (կամ դրա համարժեքը) տնօրինելու հանգամանքը: Ուղղակի ներդրման ձեռնարկության առավել հաճախ հանդիպող տարբերակը բազմազգային ընկերության մասնաճյուղն է: Օրինակ՝ Արմենթելը, Վիվասելը, Երևանի կոնյակի գործարանը, Նաիրիտը ուղղակի ներդրման ձեռնարկություններ են:

Ուղղակի ներդրումներից եկամուտները ներառում են մեկ երկրի ռեզիդենտ հանդիսացող ուղղակի ներդրողի կողմից մեկ այլ երկրի ձեռնարկությունում ուղղակի ներդրումային կապիտալից ստացված եկամուտները: Ուղղակի ներդրումներից եկամուտները բաժանվում են *կապիտալի մասնակցությունից եկամուտների* և *պարտքի հանձառության եկամուտների*:

Կապիտալի մասնակցությունից եկամուտները, իրենց հերթին, դասակարգվում են (ա) բաշխված շահույթի (շահաբաժիններ և մասնաճյուղի բաշխված շահույթ) և (բ) վերաներդրված շահույթ ու մասնաճյուղերի չբաշխված եկամուտ: Բաշխված շահույթը ուղղակի ներդրողի կողմից արտասահմանյան ձեռնարկության բաժնետոմսերի տնօրինումից ստացված շահաբաժիններն են և՝ հակառակը, ինչպես նաև մասնաճյուղերի շահույթի այն մասը, որը փոխանցվում է ուղղակի ներդրողին: Ձեռնարկության եկամտի այն մասը, որը չի բաշխվում շահաբաժինների միջոցով կամ չի փոխանցվում ուղղակի ներդրողին, գրանցվում է «վերաներդրված եկամուտներ և մասնաճյուղերի չբաշխված շահույթ» ենթահոդվածում:

Իսկ *պարտքի հանձառության եկամուտները* ներառում են միջֆիրմային վարկի տոկոսները: Այսպես՝ ռուսական Վիմպելկոմ ընկերությունը հայկական Արմենթել ընկերության 100% բաժնետոմսերի սեփականատերն է և, հետևաբար, Վիմպելկոմի կողմից Արմենթելին վարկի տրամադրման դեպքում, այդ վարկի տոկոսների վճարումը ՀՀ վճարային հաշվեկշռում կգրացնվի «պարտքի հանձառության եկամուտներ» ենթահոդվածի դեբետում:

Պորտֆելային ներդրումներից եկամուտները ձևավորվում են բաժնետոմսերի, պարտատոմսերի, դրամական շուկայի գործիքների, ֆինանսական ածանցյալների

տնօրինումից: Պորտֆելային ներդրումներից եկամուտները, նույնպես, դասակարգվում են կապիտալի մասնակցությունից եկամուտների (շահաբաժիններ) և պարտքի հանձնառության եկամուտների (տոկոսներ):

Այլ ներդրումներից եկամուտները ներառում են այլ պարտավորությունների դիմաց վճարված և այլ ակտիվների դիմաց ստացված տոկոսները: Որպես այդպիսի պարտավորություններ կամ ակտիվներ հանդես են գալիս կարճաժամկետ կամ երկարաժամկետ վարկերը, ավանդները և այլն:

Ընթացիկ տրանսֆերտներ

Ընթացիկ տրանսֆերտները դասակարգվում են ըստ ոլորտների (ա) պետական կառավարման մարմիններ և (բ) այլ ոլորտներ: Առաջինում ներառվում են միջպետական շնորհները՝ ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով, տարերային աղետների կամ այլ դեպքերում սննդամթերքի, հագուստի, դեղորայքի և այլնի նվիրատվությունը, միջազգային կազմակերպություններում անդամավճարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներին վճարվող կենսաթոշակները (դեբետ), նրանցից ստացվող եկամտահարկը (կրեդիտ) և այլն: Այլ ոլորտներին առնչվող ընթացիկ տրանսֆերտները ներառում են պետական կառավարման մարմինների համար նշվածները և *միգրանտների փոխանցումները*: Վերջիններս ներառում են արտասահմանում ավելի քան մեկ տարի գտնվող անձանցից փոխանցումները, այսինքն՝ սփյուռքից ստացվող փոխանցումները:

Շեշտենք՝ արտասահմանում աշխատող միգրանտի փոխանցումները համարվում են ընթացիկ տրանսֆերտ միայն այն դեպքում, երբ միգրանտը դարձել է այն երկրի ռեզիդենտ, որում աշխատում է: Հակառակ դեպքում, եթե միգրանտը շարունակում է մնալ ծագման երկրի ռեզիդենտ (մեկնելուց հետո մինչև մեկ տարվա ընթացքում), ապա նրա փոխանցումները համարվում են եկամուտներ և գրանցվում են «աշխատողների վարձատրություն» ենթահոդվածում:

Կապիտալի և ֆինանսական հաշիվ

Կապիտալի հաշիվ

Կապիտալի հաշիվը ներառում է երկու ենթահաշիվ (ա) կապիտալ տրանսֆերտներ ու (բ) չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվների ձեռք բերում և տրամադրում:

Կապիտալ տրանսֆերտները ներառում են (ա) ֆիքսված (կապիտալ) ակտիվի նկատմամբ սեփականության իրավունքի փոխանցումը, (բ) միջոցների փոխանցումը, որոնց նպատակն է ֆիքսված ակտիվի ձեռք բերումը և (գ) պարտապանի պարտքի ներումը:

Ըստ տնտեսության հատվածների՝ պետական կառավարման մարմինների հետ առնչվող կապիտալ տրանսֆերտներ են արտաքին պարտքի ներումը, ներդրումային շնորհների տրամադրումը, ռազմական հենակայանների փոխանցումը: Օրինակ՝ Ռուսաստանի կողմից

ՀՀ պետական պարտքի ներումը երկու երկրների միջև իրականացված կապիտալ տրանսֆերտ է: Ներդրումային շնորհի օրինակ կարող է լինել օտարերկրյա ֆինանսական աջակցությամբ դպրոցի կառուցումը: Շեշտենք՝ երբ օտարերկրյա ֆինանսական աջակցությամբ ձեռք է բերվում հացահատիկ, այսինքն՝ շնորհը ունի ընթացիկ սպառման նպատակ, ապա այն գրանցվում է ընթացիկ տրանսֆերտներում:

Մասնավոր հատվածի հետ առնչվող կապիտալ տրանսֆերտները, բացի պարտքի ներումից, ներառում են *միգրանտների տրանսֆերտները*: Այսպես, երբ ՀՀ ռեզիդենտը մշտական բնակության է մեկնում ԱՄՆ և իր հետ տանում է իր շարժական գույքը, ապա այդ գույքի արժեքը գրանցվում է միգրանտների տրասնֆերտներ ենթահոդվածում: Բացի այդ, եթե այդ անձը սեփականության իրավունքով տնօրինում է հայկական որևէ ձեռնարկության բաժնետոմսեր, ապա դրանք դառնում են ԱՄՆ–ի արտաքին ֆինանսական ակտիվներ և ՀՀ–ի ֆինանսական պարտավորություններ:

Չարտադրված, ոչ ֆինանսական ակտվիների ձեռք բերում (դեբետ) կամ տրամադրում (կրեդիտ) հոդվածը առնչվում է արտոնագրերի, հեղինակային իրավունքների, լիցենզիաների գնման հետ: Շեշտենք, որ անհրաժեշտ է տարբերել այդ ակտիվների օգտագործման իրավիունքի գնումը դրանց նկատմամբ սեփականության իրավունքի գնումից: Օգտագործման իրավունքի դիմաց կատարված վճարները գրանցվում են ծառայություններ հաշվի «արտոնագրային վճարներ և հեղինակային հոնորարներ» ենթահոդվածում, և միայն սեփականության իրավունքի գնման դեպքում՝ կապիտալի հաշվում:

Ֆինանսական հաշիվ

Ֆինանսական հաշիվը ընդգրկում է արտաքին ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սեփականության իրավունքի փոփոխման հետ կապված գործարքները:

Ֆինանսական ակտիվների հետ գործարքները ներառում են.

- Իրական ռեսուրսի փոխանակում ֆինանսականով – գործարքի մի կողմը գրանցվում է ընթացիկ հաշվում, մյուսը՝ ֆինանսական հաշվում:
- Չարտադրված, ոչ ֆինանսական ակտիվի փոխանակում ֆինանսականով – գործարքի մի կողմը գրանցվում է կապիտալի հաշվում, մյուսը՝ ֆինանսական հաշվում:
- Ֆինանսական ակտիվի փոխանակում ֆինանսականով – գործարքի երկու կողմն էլ գրանցվում են ֆինանսական հաշվում:
- Ֆինանսական ակտիվի փոխանցում առանց փոխհատուցման – գործարքի մի կողմը գրանցվում է կա՛մ ընթացիկ տրանսֆերտներում, կա՛մ կապիտալ տրանսֆերտներում, իսկ մյուսը՝ ֆինանսական հաշվում:

Ֆինանսական հաշվում գործարքները դասակարգվում են ըստ ֆունկցիոնալ կատեգորիաների՝ (ա) ուղղակի ներդրումներ, (բ) պորտֆելային ներդրումներ, (գ) այլ ներդրումներ և (դ) ռեզերվային ակտիվներ:

Ուղղակի ներդրումներ

Ուղղակի ներդրումային կապիտալի բաղադրիչներն են բաժնետիրական կապիտալը, վերաներդրված շահույթը և միջֆիրմային պարտքը: Վերաներդրված եկամուտը ձեռնարկության չբաշխված շահույթում ուղղակի ներդրողի բաժինն է: Միջֆիրմային պարտքը ուղղակի ներդրողի և ուղղակի ներդրման ձեռնարկության միջև միջոցների տրամադրումն է ու ստացումը:

Պորտֆելային ներդրումներ

Պորտֆելային ներդրումները ներառում են ինչպես կապիտալի մասնակցության գործիքներ՝ բաժնետոմս, այնպես էլ պարտքի հանձնառության գործիքներ՝ պարտատոմսեր, փողի շուկայի գործիքներ, ֆինանսական ածանցյալները:

Պորտֆելային ներդրումներում ներառվող գործիքների առանձնահատկությունը դրանց՝ կազմակերպված շուկաներում (բորսաներում) առուվաճառքի օբյեկտ հանդիսանալն է, ինչը ներդրողին հնարավորություն է տալիս կապիտալը մի գործիքից փոխանցել մեկ այլ գործիքի՝ անկախ դրանց ժամկետի հասունացման հանգամանքից:

Այլ ներդրումներ

Այլ ներդրումները գլխավորաբար ներառում են վարկերը, այդ թվում առևտրային վարկերը և կանխիկ դրամական միջոցներն ու ավանդները:

Պահուստային ակտիվներ

Պահուստային ակտիվները բաղկացած են այն արտաքին ակտիվներից, որոնք անմիջականորեն գտնվում են մոնետար իշխանությունների վերահսկողության ներքո և կարող են օգտագործվել վճարումների պակասորդը ֆինանսավորելու համար կամ ազգային արժույթի փոխարժեքը կարգավորելու նպատակով արտարժույթի շուկայում ներխուժումներ կատարելու համար կամ համանման այլ նպատակներով: Պահուստային ակտիվները ներառում են մոնետար ոսկին, փոխառության հատուկ իրավունքները (SDR), Արժույթի միջազգային հիմնադրամում պահուստային դիրքը, արտարժութային ակտիվները (արտարժույթ, պետական արժեթղթեր):

Վճարային հաշվեկշռում գործարքների գրանցման օրինակներ

1. *Ապրանք/ծառայության փոխանակում ֆինանսական ակտիվի դիմաց:* Հայկական Synergy ընկերությունը ամերիկյան STMicroelectronics ընկերությանը մատուցում է 50հզ. դոլար արժողության ծրագրավորման ծառայություններ, որի դիմաց STMicroelectronics ընկերությունը

վճարում է Հայաստանի HSBC բանկում իր հաշվից Synergy ընկերության հաշվին փոխանցելու միջոցով:

Հայաստան		ԱՄՆ	
Ընթացիկ հաշիվ		*Ընթացիկ հաշիվ*	
Ծառայությունների արտահանում	+ 50	Ծառայությունների ներմուծում	– 50
Ֆինանսական հաշիվ		*Ֆինանսական հաշիվ*	
Այլ ներդրումներ – արտաքին ֆինանսական պարտավորությունների կրճատում	– 50	Այլ ներդրումներ – արտաքին ֆինանսական ակտիվների կրճատում	+ 50

2. *Ապրանքի/ծառայության փոխանակում այլ ապրանքի/ծառայության դիմաց (բարտեր)*: Ռուսական Юкос ընկերությունը հայկական Armavia ընկերությանը առաքում է 50հզ. դոլարի վառելիք, որի դիմաց Armavia-ն Юкос-ին մատուցում է նույն արժողության տրանսպորտային ծառայություններ:

Հայաստան		Ռուսաստան	
Ընթացիկ հաշիվ		*Ընթացիկ հաշիվ*	
Ապրանքների ներմուծում	– 50	Ապրանքների արտահանում	+ 50
Ծառայությունների արտահանում	+ 50	Ծառայությունների ներմուծում	– 50

3. *Ֆինանսական ակտիվի փոխանակում ֆինանսական ակտիվի դիմաց*. ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձը գնում է 50հզ. դոլարի լատվիական գանձապետական մուրհակներ՝ դրա դիմաց վճարելով լատվիական Parex բանկում իր հաշվից Լատվիական գանձապետարանի հաշվին փոխանցելու միջոցով:

Հայաստան		Լատվիա	
Ֆինանսական հաշիվ		*Ֆինանսական հաշիվ*	
Պորտֆելային ներդրումներ – պարտքի արժեթղթեր – ակտիվների ավելացում	– 50	Պորտֆելային ներդրումներ – պարտքի արժեթղթեր – պարտավորությունների ավելացում	+ 50
Այլ ներդրումներ – արտաքին ֆինանսական ակտիվների կրճատում	+ 50	Այլ ներդրումներ – արտաքին ֆինանսական պարտավորությունների կրճատում	– 50

4. *Ապրանքների/ծառայությունների փոխանցում՝ առանց փոխհատուցման*: ՀՀ Կառավարությունը 50հզ. դոլարի վրաններ է ուղարկում Մեքսիկա՝ իբրև մարդասիրական օգնություն ջրհեղեղից տուժածներին:

Հայաստան		Մեքսիկա	
Ընթացիկ հաշիվ		*Ընթացիկ հաշիվ*	
Ապրանքների արտահանում	+ 50	Ապրանքների ներմուծում	– 50
Ընթացիկ տրանսֆերտներ. Դեբետ	– 50	Ընթացիկ տրանսֆերտներ. կրեդիտ	+ 50

5. *Ֆինանսական ակտիվի փոխանցում՝ առանց փոխհատուցման*: Հայաստանի ռեզիդենտ, ծագումով հնդիկ պրն. Ռաջաթը Հնդկաստանում ապրող իր բարեկամին է փոխանցում 50հզ դոլար՝ հայկական Converse Bank-ում իր հաշվից HSBC բանկի հնդկական մասնաճյուղում իր բարեկամի հաշվին փոխանցելու միջոցով:

Հայաստան		Հնդկաստան	
Ընթացիկ հաշիվ		*Ընթացիկ հաշիվ*	
Ընթացիկ տրանսֆերտներ. Դեբետ	– 50	Ընթացիկ տրանսֆերտներ. կրեդիտ	+ 50
Ֆինանսական հաշիվ		*Ֆինանսական հաշիվ*	
Այլ ներդրումներ – արտաքին ֆինանսական ակտիվների կրճատում	+ 50	Այլ ներդրումներ – արտաքին ֆինանսական ակտիվների ավելացում	– 50

Օգտագործված տերմիններ

Ֆինանսական և գործառնական լիզինգ: Լիզինգը մեքենասարքավորումների վարձակալությունն է՝ դրա ձեռք բերման կապիտալ ծախսերից խուսափելու համար: Ֆինանսական լիզինգը մեքենասարքավորումների երկարաժամկետ վարձակալությունն է, երբ լիզինգառուի կողմից լիզինգատուին տարիների ընթացքում վճարվող վարձակալության գումարը ծածկում է ակտիվի ձեռք բերման նախնական արժեքը: Ի տարբերություն՝ գործառնական լիզինգը կարճաժամկետ վարձակալությունն է և վճարվող վարձակալության գումարը չի ծածկում ակտիվի ձեռք բերման ամբողջական արժեքը:

Պարտատոմս: Պարտքը հավաստող արժեթուղթ, որը կարող է թողարկվել ընկերության, ֆինանսական հաստատության կամ կառավարության կողմից: Պարտատոմս թողարկողը պարտավորվում է այն տնօրինողին վճարել մայր գումարը ապագա ֆիքսված ժամկետում և տոկոսները:

Փողի շուկայի գործիքներ: Փողի շուկան պարտքի գործիքների կարճաժամկետ (նվազ քան մեկ տարին) շուկան է: Պարտքի գործիքներ են բանկային ակցեպտը, առևտրային թղթերը, ավանդային վկայագրերը, գանձապետական մուրհակները:

Բանկային ակցեպը բանկի կողմից տրված երաշխիք է՝ վճարել գումարը: Երբ արտահանման դիմաց ներմուծողը վճարելու է ոչ թե նախապես, այլ՝ որոշ ժամանակ անց, ապա արտահանողը կարող է պահանջել, որ ներմուծողի պարտամուրհակը ակցեպտվի բանկի կողմից: Այդ դեպքում, եթե ներմուծողը հրաժարվի վճարելուց, ապա նրա փոխարեն կվճարի բանկը:

Առևտրային թղթերը կարճաժամկետ պարտատոմսեր են, որ թողարկվում են ընկերությունների, բանկերի և այլ հաստատությունների կողմից՝ վարկավորման ընթացիկ կարիքները բավարարելու նպատակով:

Ավանդային վկայագիրը բանկի կողմից թողարկված պարտավորություն է, որը վկայում է ավանդի առկայությունը և խոստումը՝ սահմանված ժամկետի լրանալուց հետո վերադարձնել ավանդը և վճարել տոկոսները: Ավանդային վկայագրերը կարող են շրջանառել երկրորդային շուկայում:

Գանձապետական մուրհակը կառավարության կողմից թողարկված կարճաժամկետ, տոկոս չբերող պարտատոմս է: Այն վաճառվում է զեղչով՝ հաշվի առնելով ընթացիկ տոկոսադրույքը և մարվում է անվանական արժեքով:

Ֆինանսական ածանցյալ: Արժեթուղթ, որի արժեքը որոշվում է նրա հիմքում ընկած ակտիվի փաստացի կամ ակնկալվող արժեքով: Այդպիսի ակտիվ կարող է լինել ապրանքը, արժեթուղթը կամ արժույթը: Ֆինանսական ածանցյալներ են ֆյուչերսը, օպցիոնը և սվոփը:

Առևտրային վարկ: Վաճառողից գնորդին տրամադրվող վարկ, երբ առաքված ապրանքների դիմաց գնորդը վճարում է ոչ թե անմիջապես, այլ որոշ ժամանակ անց: Սպառողական ապրանքների դեպքում վճարումը կարող է տեղի ունենալ մի քանի շաբաթ կամ ամիս անց, իսկ կապիտալ ապրանքների դեպքում, երբեմն, մի քանի տարի անց:

Ավելցուկ և պակասորդ

Վճարային հաշվեկշիռը միշտ հավասարակշռված է: Չնայած դրան, հաճախ մամուլում հրապարակվում են հոդվածներ, որոնցում խոսվում է վճարային հաշվեկշռի պակասորդի կամ ավելցուկի մասին: Օրինակ՝ 2007թ–ի հոկտեմբերի 16-ին Forbes պարբերականի ինտերնետ կայքում հրապարակված հոդվածում խոսվում է Ֆիլիպինների վճարային հաշվեկշռի պակասորդի մասին: Հոդվածում, սակայն, ի նկատի է առնվում ոչ թե վճարային հաշվեկշիռը ընդհանրապես, այլ այն՝ առանց պաշտոնական պահուստների:

Ընդհանրապես, վճարային հաշվեկշռի ավելցուկ/պակասորդ հասկացությունը հիմնվում է այն մոտեցման վրա, թե հաշիվները կարելի է տարանջատել ինքնուրույն (այլ կերպ՝ գծից վեր) և ոչ–ինքնուրույն (գծից վար) հաշիվների: Ըստ այդ մոտեցման՝ հաշիվները համարվում են ինքնուրույն, եթե նրանցում ներառվող գործարքները իրականացվում են՝ անկախ վճարային հաշվեկշռի այլ հաշիվներից: Իսկ ոչ–ինքնուրույն են այն հաշիվները, որոնցում ներառվող գործարքները կատարվում են ինքնուրույն հաշիվների ստացումների և վճարումների ավելցուկը կամ պակասորդը ֆինանսավորելու համար:

Արդյունքում ընդունված է սահմանել, որ վճարային հաշվեկշիռը ավելցուկով է, երբ ինքնուրույն ստացումները գերազանցում են ինքնուրույն վճարումներին և պակասորդով է, երբ ինքնուրույն ստացումները փոքր են ինքնուրույն վճարումներից:

Իսկ քանի պաշտոնական պահուստները, որ տնօրինվում են կենտրոնական բանկի կողմից, կարող են օգտագործվել վճարումների անհավասարակշռությունը կամ ազգային արժույթի

փոխարժեքի տատանումը մեղմելու նպատակով, ապա պաշտոնական պահուստները ընդունված է համարել ոչ–ինքնուրույն հաշիվ։

Վճարային հաշվեկշռի հիմնական հաշիվների միջև կապը կարելի է արտահայտել հետևյալ հավասարմամբ՝

$$CA + K = -R$$

Որտեղ CA-ը ընթացիկ հաշիվն է, K-ն՝ կապիտալի և ֆինանսական հաշիվը՝ առանց պաշտոնական ռեզերվների, իսկ R-ը՝ պաշտոնական պահուստների փոփոխությունը։ Ընթացիկ հաշիվն ու կապիտալի և ֆինանսական հաշիվը՝ առանց պաշտոնական պահուստների հակիրճ անվանենք «մնացյալ» հաշիվներ։

Այսպիսով, երբ վճարային հաշվեկշռի «մնացյալ» հաշիվների կրեդիտների ու դեբետների գումարը հավասար է զրոյի, այսինքն՝ $CA + K = 0$, ապա կասենք, որ վճարային հաշվեկշիռը հավասարակշռված է։ Նկատենք, որ այդ դեպքում ընթացիկ հաշիվը հակառակ նշանով հավասար է կապիտալի և ֆինանսական հաշվին՝ $CA = -K$, իսկ պաշտոնական պահուստների փոփոխությունը հավասար է զրոյի՝ $R = 0$։ Այսինքն՝ օտարերկրացիներին կատարված և նրանցից ստացված վճարումները միմյանց հավասար են։

Սակայն, երբ օտարերկրացիներին կատարված վճարումները ավելին են, քան նրանցից ստացված վճարումները, ապա դա նշանակում է, որ վճարային հաշվեկշռի «մնացյալ» հաշիվների դեբետների գումարը մեծ է կրեդիտների գումարից, այսինքն՝ «մնացյալ» հաշիվները բացասական են և, հետևաբար, պաշտոնական պահուստների փոփոխությունը պետք է լինի դրական՝ $CA + K < 0 \Rightarrow R > 0$։ Այդ դեպքում վճարային հաշվեկշիռը պակասորդով է և կենտրոնական բանկը պակասորդը պետք է ֆինանսավորի պահուստային ակտիվների հաշվին՝ դրանց մի մասը վաճառելով։ Փաստորեն, երբ պաշտոնական պահուստները կրճատվում են, ապա դրանք գրանցվում են դրական նշանով։ Սա, թերևս, վճարային հաշվեկշռի ամենից տարօրինակ կանոններից մեկն է։ Դրա պատճառը, սակայն, նրանում է, որ վճարային հաշվեկշիռը ընդհանուր առմամբ միշտ պետք է լինի հավասարակշռված։ Հետևաբար, երբ «մնացյալ» հաշիվները բացասական են, ապա պաշտոնական պահուստների փոփոխությունը պետք է լինի դրական, որ հանրագումարը կազմի զրո։

Եվ, ընդհակառակը, երբ օտարերկրացիներին կատարված վճարումները փոքր են նրանցից ստացված վճարումներից, ապա «մնացյալ» հաշիվները դրական են և, հետևաբար, պաշտոնական պահուստների փոփոխությունը պետք է լինի բացասական՝ $CA + K > 0 \Rightarrow R < 0$։ Այդ դեպքում վճարային հաշվեկշիռը ավելցուկով է և կենտրոնական բանկը մեծացնում է իր պահուստային ակտիվները։ Այսինքն, երբ պաշտոնական պահուստները ավելանում են, ապա դրանք գրանցվում են բացասական նշանով։